

9721



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«03» 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 178 - 24

Նախաձեռնող՝

«Ի ՍԻ Ի Քաուքազու» ՍՊԸ

ք. Երևան, Թումանյան 8, 5-րդ հարկ, 504 գրասենյակ

Գործունեությունը՝

«Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի համար գետավազանային կառավարման պլան»-ի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն

Լոռու մարզ, Տավուշի մարզ, Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 20 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 178 - 24

«03» սեպտեմբերի 2024թ.

«Հյուսիսային ջրավազանային կառավարման պլան» հիմնադրույթային փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«Ի ՍԻ Ի Քառուքազու» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմնադրույթային փաստաթուղթ.
ռազմավարական էկոլոգիական գնահատման
(ՌԷԳ) հաշվետվություն

Ներածական մաս. Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի համար գետավազանային կառավարման պլանի նախագծի մշակումն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Ա. Նալբանդյանի անվան Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի կողմից «ԵՄ-ն՝ շրջակա միջավայրի համար. ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրի շրջանակներում և ղեկավարությամբ: Ծրագիրը նպատակ ունի բարելավել ԵՄ Արևելյան գործընկերության երկրներում մարդկանց բարեկեցությունը և խթանել նրանց տրանսֆորմացիան՝ համաձայն Եվրոպական կանաչ գործարքի և Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ): Ջրային ռեսուրսները և ջրային էկոհամակարգերը պահպանելու համար անհրաժեշտ է շտապ միջոցներ ձեռնարկել, մասնավորապես ստեղծել ջրավազանի կառավարման արդյունավետ շրջանակ: Ջրային ռեսուրսների կայուն կառավարման հասնելը պահանջում է միջոցառումներ, համակարգային մոտեցում, որը հաշվի է առնում տեխնիկական, բնապահպանական, սոցիալական, տնտեսական և մշակութային խնդիրները:

Ջրավազանային կառավարման պլանն ուղեցուցային փաստաթուղթ է, որն ապահովում է ջրային ռեսուրսների կառավարման ընդհանրական և գլոբալ մոտեցում, հաշվի առնելով՝ տնտեսական, էկոլոգիական և սոցիալական գործոնները, ջրային ռեսուրսների կայուն կառավարման համար անհրաժեշտ միջոցառումների, ռազմավարությունների և քաղաքականության մշակման համար:

Ջրավազանային կառավարման պլանի հիմնական խնդիրներն են.

- ջրային ռեսուրսների պահպանությունը,
- վատթարացված ջրային մարմինների որակական և քանակական վերականգնումը,
- ջրային մարմինների վիճակի հետագա վատթարացման կանխումը,
- կայուն ջրօգտագործման խթանումը:



Ջրավազանային կառավարման տարածքի համար ջրավազանային կառավարման պլանի հիմնական բաղադրիչներն են.

- ջրավազանի բնութագրումը,
- ջրավազանի հատուկ պահպանվող տարածքների բնութագրումը,
- ջրավազանում մեղանյութերի բացահայտումը, և դրանց՝ ջրային զանգվածի վրա ազդեցության գնահատումը,
- ջրային ռեսուրսների կարգավիճակի գնահատումը,
- ջրային մարմինների ռիսկի գնահատումը,
- բնապահպանական նպատակների սահմանումը,
- միջոցառումների ծրագրի մշակումը, ջրային մարմինների ջրի որակի «լավ» կարգի հասնելու նպատակով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ներկայացված «Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի համար գետավազանային կառավարման պլան»-ի նախագիծը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված հիմնադրությամբ փաստաթուղթ է, որն Օրենքի 21-23 հոդվածներով, և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշմամբ, ենթակա է ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննության:

Նկարագրական մաս. Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքը գտնվում է (ՋԿՏ) Հայաստանի Հանրապետության հյուսիսային և հյուսիսարևելյան հատվածում, գետերի ջրահավաք ավազանը կազմում է 7185 կմ²: Հյուսիսային ՋԿՏ-ն ընդգրկելով ամբողջությամբ Տավուշի և Լոռու մարզը, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի հյուսիսարևելյան փոքր մասը, ընդհանուր սահմաններ ունի Արագածոտնի, Կոտայքի մարզերի և հարևան երկրների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ: Ջրավազանային կառավարման տարածքի ամենաբարձր կետն Աչքասար լեռնագագաթն է՝ 3196 մ, իսկ ամենացածր կետը՝ 490 մ է:

Բնութագրիչներ	Դեբեդի ԳԱ	Աղստևի ԳԱ	Քուռ գետի փոքր վտակներ	Հյուսիսային ՋԿՏ
Ջրհավաք մակերեսը, կմ ²	3895	2480	810	7185
Ամենացածր կետը, մ	490	482	530	482
Ամենաբարձր կետը, մ	3196	2993	2979	3196
Բնակչություն	233 533	104 708	24 167	362 408
Քաղաքային համայնքներ	53.2 %	45.7 %	28.9 %	49.4 %
Գյուղական համայնքներ	46.8 %	54.3 %	71.1 %	50.6 %
Մարզի տարածք	Լոռի, Շիրակ	Տավուշ, Գեղարքունիք	Տավուշ	Լոռի, Տավուշ, Գեղարքունիք, Շիրակ

Հյուսիսային ՋԿՏ-ը բնութագրվում է կլիմայական պայմանների մեծ բազմազանությամբ, առանձնացնում են յոթ կլիմայական գոտիներ՝ սկսած չոր և տաք մերձարևադարձային կլիմայից մինչև բարձր լեռնային ցուրտ կլիմա: Հյուսիսային ՋԿՏ-ում կան 2388 գետեր և առուներ՝ 5913 կմ ընդհանուր երկարությամբ: Այդ գետերից 68-ն ունեն 10-25 կմ երկարություն, 10-ը՝ 25-50 կմ, 5-ը՝ 50-100 կմ, մեկը՝ 100 կմ-ից ավել:



Դեբեդ գետը Խրամ գետի աջ վտակն է, որը Լոռու մարզի գլխավոր գետն է, իր երկարությամբ, ջրառատությամբ և ջրահավաք ավազանով Հայաստանի Հանրապետության ամենախոշոր գետերից է: Գետի երկարությունը Փամբակ վտակի հետ միասին կազմում է 154 կմ, ջրահավաք ավազանի մակերեսը՝ 3790 կմ²: 1961-2021 թվականների միջին տարեկան ելքը 16,4 մ³/վ է, առավելագույնը՝ 759 մ³/վ, նվազագույնը՝ 5,80 մ³/վ (ըստ Դեբեդ-Այրում հիդրոդիտակետի տվյալների): Դեբեդ գետի խոշոր վտակներն են Փամբակը, Ձորգետը, Մարցիգետը: Դեբեդ գետի ավազանում 10կմ-ից ավելի երկարությամբ գետերի թիվը 56 է, այն ունի խառը սնուցում, որին բնորոշ են հետևյալ ջրային ռեժիմի փուլերը՝ գարնանը՝ մեծ հոսք, ամառ-աշուն՝ սակավաջուր: Տարեկան կտրվածքով հոսքի ավելի քան 32%-ն անցնում է վարարումների սեզոնին (մարտ-հունիս), 27% անձրևային հոսք և 41% ստորերկրյա ջրեր: Գարնանային վարարումները սովորաբար սկսվում են մարտի կեսերից և շարունակվում մինչև հունիսի կեսերը, ունեն լավ արտահայտված ալիք: Միջին տևողությունը մոտ 90-110 օր է՝ կախված գետի սնուցման ռեժիմից, օդի ջերմաստիճանից, ձյան հալման շրջանում հեղուկ տեղումներից, ձյան մեջ առկա ջրի պաշարից, կայուն ձնածածկի առաջացման և անհետացման պայմաններից:

Փամբակ գետը Դեբեդ գետի գլխավոր վտակն է: Գետը սկիզբ է առնում Շիրակի լեռներից 2100մ բարձրության վրա, ունի 84 կմ երկարություն, ջրահավաք ավազանի մակերեսը՝ 1370 կմ²: 1960-2021 թվականների միջին տարեկան ելքը 5,81 մ³/վ է, առավելագույնը՝ 171 մ³/վ, նվազագույնը՝ 1,30 մ³/վ (ըստ Փամբակ-Թումանյան հիդրոդիտակետի):

Ձորագետ գետը Դեբեդ գետի գլխավոր վտակն է: Գետը սկիզբ է առնում Ջավախքի լեռներից 2320 մ բարձրության վրա, ունի 67 կմ երկարություն, ջրահավաք ավազանի մակերեսը՝ 1460 կմ²: 1960-2021 թվականների միջին տարեկան ելքը 15,1 մ³/վ է, առավելագույնը՝ 395 մ³/վ, նվազագույնը՝ 3,46 մ³/վ (ըստ Ձորագետ-Գարգառ հիդրոդիտակետի):

Աղստև գետը Հյուսիսային ԶԿՏ-ի գլխավոր գետերից է և Կուր գետի աջ վտակներից: Գետը սկիզբ է առնում Փամբակի լեռներից 3000մ բարձրությունից, ունի 121 կմ երկարություն, ջրահավաք ավազանը 2500 կմ² (ՀՀ տարածքում, համապատասխանաբար՝ 81 կմ, 1730 կմ²): Աղստև գետի ավազանում կան մոտ 1000 գետեր և առուներ, այդ թվում՝ 20 գետ՝ ավելի քան 10 կմ երկարությամբ և երկու գետ՝ ավելի քան 50 կմ երկարությամբ: Աղստևի հիմնական ձախակողմյան վտակներն են՝ Բլղանը (15 կմ), Հաղարծինը (10 կմ), Պաղջուրը (31 կմ) և Ոսկեպարը (58 կմ), իսկ աջակողմյան վտակներն են՝ Գետիկը (58 կմ) և Նալթիգետը (22կմ): Աղստև գետն ունի հալոցք-անձրևային սնուցում՝ գերակշռում է մակերևութային հոսքը: Տարվա ընթացքում Աղստև գետի հոսքի 41%-ը կազմում է հալոցքը, 27%-ը՝ անձրևային, 32%-ը՝ ստորգետնյա հոսքը (ըստ Իջևանի հիդրոդիտակետի): Ամենամեծ հոսքը դիտվում է մայիսին, ապա ապրիլին և հունիսին, որոնց մեծությունը կազմում է տարեկան հոսքի համապատասխանաբար 21-25%, 17-25%, 13-17%-ը: 1960-2021 թվականների միջին տարեկան ելքը 20,4 մ³/վ է, առավելագույնը՝ 182 մ³/վ, նվազագույնը՝ 0,59 մ³/վ (ըստ Աղստև-Իջևան հիդրոէլեկտրակայանի):

Գետիկ գետն Աղստև գետի գլխավոր վտակն է, սկիզբ է առնում Սևանի լեռների հյուսիսային լանջերից, ունի 58 կմ երկարություն, ջրահավաք ավազանը՝ 596 կմ²: 1960-2021 թվականների միջին տարեկան ելքը 3,51 մ³/վ է, առավելագույնը՝ 93մ³/վ, նվազագույնը՝ 0,10մ³/վ (ըստ Գետիկ-Գոշ հիդրոդիտակետի): Կուր գետի մի քանի փոքր վտակներ սկիզբ են առնում Միափոր լեռների հյուսիսային լանջերից: Հախում գետն ունի 71 կմ երկարություն, ջրահավաք ավազանը՝ 352 կմ²(ՀՀ տարածքում, համապատասխանաբար՝ 41,5 կմ, 248 կմ²):



1960-2021 թվականների միջին տարեկան ելքը 1.43 մ³/վ է, առավելագույնը՝ 44.3 մ³/վ, նվազագույնը՝ 0.020 մ³/վ (ըստ Հախում- Ծաղկաբլան հիդրոդիտակետի):

Տավուշ գետն ունի 63 կմ երկարություն, ջրհավաք ավազանը 1180 կմ² (ՀՀ տարածքում՝ համապատասխանաբար՝ 29.5 կմ, 229 կմ²): 1960-2021 թվականների միջին տարեկան ելքը 0.66 մ³/վ է, առավելագույնը՝ 110 մ³/վ, նվազագույնը՝ 0.010 մ³/վ (ըստ Տավուշ-Բերդ հիդրոդիտակետի):

Հախինջա գետի երկարությունը 47 կմ է, ջրհավաք ավազանը՝ 454 կմ² (ՀՀ տարածքում՝ համապատասխանաբար՝ 37 կմ և 326 կմ²): 1960-2003 թվականների միջին տարեկան ելքը կազմում է 3.06 մ³/վ (ըստ Տավուշ-Բերդ հիդրոդիտակետի):

Հյուսիսային ՋԿՏ-ում են գտնվում հետևյալ ջրամբարները:

Անվանում	Մակերես հա	Ծավալ մլն.մ ³	Պատվարի բարձրություն,մ	Կառուցման տարի	Ջրօգտագործման նպատակ
Մեծավան	324	5.4	7	1989	ռոտզում
Հախում	82	12	52	1985	ռոտզում
Խնձորուտ	27.8	3.58	35.6	1974	ռոտզում
Տավուշ	36.5	5.28	60	1975	ռոտզում
Հովք	0.5	0.01	4	1967	ռոտզում
Ջողազ	214	45	60	1980	ռոտզում

Ընդհանուր առմամբ, Հյուսիսային ՋԿՏ-ում տարանջատվել են 120 ջրային մարմիններ, որոնցից.

- 83-ը բնական ՋՄ,
- 8-ն արհեստական ՋՄ,
- 5-ը խիստ փոփոխված ՋՄ,
- 24-ը ստորերկրյա ջրային մարմիններ են, այդ թվում՝ երկու հանքային ստորերկրյա ջրային մարմիններ:

Տարանջատվել են Հյուսիսային ՋԿՏ-ում 96 մակերևութային ջրային մարմիններ, որոնցից

- 8-ն արհեստական ջրային մարմիններ են, 4-ը Դեբեդի գետավազանում, 2-ը՝ Աղստևի, 2-ը՝ Կուր գետի փոքր վտակներում՝ 147,6 կմ ընդհանուր երկարությամբ,
- 5-ը խիստ ձևափոխված ջրային մարմիններ են՝ 7.2 կմ² ընդհանուր մակերեսով, որոնցից 1-ը Դեբեդի գետավազանում, 1-ը Աղստևի և 3-ը՝ Կուր գետի փոքր վտակներում,
- 66-ը 2527,1 կմ ընդհանուր երկարությամբ ջրային մարմիններ են:
- 17-ը ռիսկային ջրային մարմիններ են՝ 198.5 կմ ընդհանուր երկարությամբ, որից 12-ը՝ Դեբեդի գետավազանում, 3-ը՝ Աղստևի, 2-ը Կուր գետի փոքր վտակներում: Հիմնական ճնշումներն են ջրառը, կենցաղային կեղտաջրերի ներհոսքը, գյուղատնտեսական ցրված աղտոտումը, հիդրոմորֆոլոգիական փոփոխությունները և հանքարդյունաբերության ջրերի աղտոտումը:

Օգտագործելի ջրային ռեսուրսները ջրային ռեսուրսների այն մասն է, որը կարող է բաշխվել սպառման համար՝ առանց նվազեցնելու ազգային ջրային պաշարը: Մակերևութային ջրերի օգտագործելի պաշարները հաշվարկվել են որպես գետի բնական հոսքի (մակերևութային և ստորերկրյա ջրերի) և բնապահպանական թողքի տարբերություն: Օգտագործելի ստորերկրյա ջրային ռեսուրսները հաշվարկվում են գետի հոսքի մի մասը կազմող արդյունիքի և դրենաժային հոսքերի հիման վրա:

Ռազմավարական ջրային պաշարը դա ջրի այն որակն ու քանակն է, որը պահանջվում է արտակարգ իրավիճակներում (երաշտ, էկոլոգիական աղտոտում, բնագոտի



ճգնաժամ և այլն) մարդու հիմնական կարիքները բավարարելու և ջրային էկոհամակարգերը պահպանելու համար: Ռազմավարական պաշարն օգտագործվում է ՀՀ Կառավարության որոշմամբ:

Ազգային ջրային պաշարը ջրի այն որակն ու քանակն է, որն անհրաժեշտ է մարդու ներկա և ապագա հիմնական կարիքները բավարարելու, ինչպես նաև ջրային էկոհամակարգերը պաշտպանելու և այդ ջրային ռեսուրսի կայուն զարգացումն ու օգտագործումը ապահովելու համար: Ջրի ազգային պաշարի օգտագործումն արգելվում է, բացառությամբ ՀՀ Կառավարության որոշման հիման վրա ջրային պաշարների ռազմավարական սպառման դեպքի: Հյուսիսային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրային ռեսուրսները կազմում են 27,1 մ³/վ, կամ 854,7 մլն.մ³, որից աղբյուրների հոսքը՝ 3,67 մ³/վ կամ 115,8 մլն.մ³, դրենաժային հոսքը 14,6 մ³/վ կամ 459,5 մլն.մ³ և խորքային հոսքը կազմում է 6,3 մ³/վ կամ 198,7 մլն.մ³:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի ջրային հաշվեկշիռը հաշվարկվել է հետևյալ պարամետրերի հիման վրա՝ տեղումներ, գոլորշիացում, ընդհանուր հոսք, և խորքային հոսք: Հաշվեկշռի հաշվարկը հիմնված է բացառապես գետավազանի բնական ջրաքանակի վրա: Հյուսիսային ՋԿՏ-ի ջրային հաշվեկշիռը գնահատվել է 2015-2021 թվականների միջին տարեկան արժեքների հիման վրա: Ջրային հաշվեկշիռը գնահատվել է ավազանային կառավարման ողջ տարածքի համար՝ հաշվի առնելով վերին հոսանքի գոտիները և առանձին գետավազանները:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի ջրահավաք ավազանը ՀՀ տարածքում կազմում է 7185.0 կմ², ըստ գետավազանների բաժանված է 3 հիմնական մասի:

- Դեբեդ գետի ավազանը, որի տարածքը կազմում է 3885.5 կմ², ներառում է Դեբեդ գետի ջրահավաք ավազանը (3736.3 կմ²), դեպի Վրաստանի տարածք հոսող գետերի վերին հոսանքի ջրահավաք ավազանները (149.2 կմ²),
- Աղստև գետի ավազան, որի տարածքը կազմում է 2414.2 կմ², ներառյալ Աղստև գետի ջրհավաք ավազանը (1736.8 կմ²), Աղստևի, Ոսկեպար վտակը Կիրանց վտակով (481.9 կմ²), Կուր գետի փոքր վտակները, որոնք թափվում են Ադրբեջանի տարածք, Աղստև գետի ավազաններ՝ Բաղանիս Կողբ և Նոյեմբերյան վտակներ և վերին հոսանքի այլ ջրհավաք ավազաններ (195,5 կմ²):
- Կուր գետի փոքր վտակների գետավազանները, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 783,3 կմ², ներառում են Հախումի (242,2 կմ², Տավուշի (219,6 կմ².) և
- Ախինջայի գետավազանները՝ Խնձորուտ վտակով (321,5 կմ².)

Հյուսիսային ՋԿՏ-ի ջրային հաշվեկշիռն ունի հետևյալ պարամետրերը

- միջին բազմամյա տեղումները՝ 4346,2 մլն մ³ կամ 613,6 մմ,
- ընդհանուր գոլորշիացում՝ 2667,0 մլն մ³ կամ 376,5 մմ,
- հոսքը՝ 1679,1 մլն մ³ կամ 237,1 մմ, որից 1568,7 մլն մ³ կամ 221,5 մմ գետային, իսկ ստորգետնյա հոսքը՝ 110,4 մլն մ³ կամ 15,6 մմ:

Ջրային հաշվեկշռի տարրերի բազմամյա միջին արժեքներն ըստ գետավազանների Հյուսիսային ՋԿՏ-ում

Գետավազան	Մակերես, կմ ²	Տեղումներ մլն մ ³ /մմ	Գոլորշիացում մլն մ ³ /մմ	Ընդհանուր հոսք, մլն մ ³ /մմ	Գետային հոսք, մլն մ ³ /մմ	Մակերես ութային հոսք, մլն մ ³ /մմ	Ստոգետ նյա հոսք, մլն մ ³ /մմ	Խորքային ն հոսք, մլն մ ³ /մմ
Դեբեդ	3885,5	650,0/ 2525,5	357,7/ 1389,9	292,3/ 1135,6	273,8/ 1063,7	161,5/ 627,6	112,2/ 436,1	18,5/ 02571,9
Աղստև	2414,2	566,8/ 1368,4	399,6/ 964,7	167,2/ 403,7	157,5/ 380,3	111,8/ 270,0	45,7/ 110,3	9,7/ 23,4



Կուր գետի փոքր վտակներ	783,3	577,5/ 452,3	398,9/ 312,4	178,6/ 139,9	159,2/ 124,7	122,3/ 95,8	36,9/ 28,9	19,4/ 15,2
Ընդամենը՝ Հյուսիսային և ԶԿՏ	7083,0	613,6/ 4346,2	376,5/ 2667,0	237,1/ 1679,1	221,5/ 1568,7	140,2/ 993,4	81,2/ 575,4	15,6/ 110,4

Ջրային հաշվեկշռի յուրաքանչյուր տարրի համար, ըստ վերին հոսանքի գոտիների, տրվել են կապեր, որոնց միջոցով հաշվարկվել են այդ տարրերի միջին արժեքները՝ ելնելով ջրհավաք ավազանի միջին հավասարակշռված բարձրություններից: Ելնելով հաշվարկներից Հյուսիսային ԶԿՏ-ում գետային հոսքը հիմնականում ձևավորվում է 1000-3000մ բարձրությունների վրա:

Վերին հոսանքի գոտիներ,մ	Մակերես, կմ ²	Տեղումներ մլն մ ³ /մմ	Գոլորշիացում մլն մ ³ /մմ	Ընդհանուր հոսք, մլն մ ³ /մմ	Գետային հոսք, մլն մ ³ /մմ	Մակերևույթային հոսք, մլն մ ³ /մմ	Ստոգետ նյա հոսք, մլն մ ³ /մմ	Խորքային և հոսք, մլն մ ³ /մմ
3000-2000	3885.5	647.0/ 1035.4	251.4/ 402.3	431.8/ 633.1	381.9/ 611.2	238.7/ 382.0	143.3/ 229.2	13.7/ 21.9
2000-1000	2414.2	633.1/ 2897.4	409.3/ 1873.3	223.8/ 1024.1	207.0/ 947.5	132.3/ 605.3	74.8/ 342.2	16.7/ 76.6
Մինչև 1000	783.3	413.4/ 456.1	431.8/ 391.4	24.3/ 22.0	11.1/ 10.1	6.8/ 6.2	4.3/ 3.9	13.2/ 11.9
Ընդամենը	7083.0	613.6 4346.2	376.5/ 2667.0	237.1/ 1679.1	221.5/ 1568.7	140.2/ 993.4	81.2/ 575.4	15.6/ 110.4

Գետերի բնապահպանական թողքի գնահատում

Բնապահպանական թողքը ջրի նվազագույն ելքն է, որն ապահովում է ջրային ռեսուրսի էկոլոգիական հավասարակշռությունը և ինքնավերականգնումը: Հյուսիսային ԶԿՏ-ում գործող և փակված «Հիդրոտեղակայման և մոնիթորինգի կենտրոնի» 30 հիդրոլոգիական դիտակետերում բնապահպանական թողքը հաշվարկվել է ըստ Կառավարության 2018թ. հունվարի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի պահանջների:

Հյուսիսային ԶԿՏ-ում ջրի կարգավիճակի վրա հիմնական ճնշումների ու ազդեցությունների շարժիչ ուժերն են համարվում՝

Գյուղատնտեսությունը, Հյուսիսային ԶԿՏ-ում տնտեսության զարգացման հիմնական ուղղությունն է: 2023թվականի հունվարի դրությամբ՝ Հյուսիսային ԶԿՏ-ում գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են մոտ 38118.8 հա, որից 18%-ը վարելահողեր են, մոտ 40%-ը՝ մշակվող:

Հյուսիսային ԶԿՏ-ում գյուղատնտեսական հողերի կառուցվածքն ըստ գետավազանների

Տեսակը	Դեբեդի ԳԱ	Աղստևի ԳԱ և Կուր գետի փոքր վտակներ	Հյուսիսային ԶԿՏ
Գյուղատնտեսական նշանակության հողեր	250904,3	130514,5	381418,8
Վարելահողեր	42013,6	26532,8	68546,4
Ոռոգելի հողեր	9550,3(որից փաստացի ոռոգվում է 3500)	6446,3	15996,6



Անասնաբուծության մեջ հիմնական ճյուղերն են կովաբուծությունը և խոզաբուծությունը: Անասնաբուծության վերաբերյալ տվյալները բերված են ստորև՝


Գյուղատնտեսական կենդանիներ	Դեբեդի ԳԱ	Աղստևի ԳԱ և Կուր գետի փոքր վտակներ	Հյուսիսային ԶԿՏ
Անասնազլխաքանակ			
Խոշոր եղջերավոր անասուն	72075	33554	105629
Խոզ	20729	17190	37919
Ոչխար և այծ	31947	24711	56658
Ձի	2500	3700	6200

Աղստևի գետավազանում օգտագործվել է 169,9 տոննա ազոտի հիմքով պարարտանյութ՝ 567 հեկտար պարարտացված հողատարածքով: Թունաքիմիկատների կիրառումն ընդգրկել է 7328 հեկտար տարածք՝ օգտագործելով 604,09 լիտր նյութեր, այդ թվում՝ տրիումֆ և բրոմալադ:

Ձկնաբուծությունը Հյուսիսային ԶԿՏ-ում զարգացած չէ, ՇՄՆ ՋՌԿՎ տվյալներով՝ 2023 թվականի դրությամբ տրվել է 6 ջրօգտագործման թույլտվություն՝ ընդհանուր 6,08 մլն. մ³ ջրի ծավալ: Ձկնաբուծության համար հիմնականում օգտագործվում են Դեբեդ, Գետիկ և Աղստև գետերի ստորերկրյա ջրերը: Ձկնաբուծարանների դրենաժային ջրերը հոսում են Դեբեդ, Ձորագետ, Գետիկ, և Աղստև գետեր:

Հողորոններգետիկան հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տվյալների համաձայն՝ 2023 թվականի հուլիսի դրությամբ, ԶԿՏ-ում գործում է 58 ՀԷԿ, ներառյալ փոքր ՀԷԿ-երը, որոնցից 48-ը շահագործվում են: 6 ՀԷԿ-եր տեղակայված են ջրանցքների վրա:

Արդյունաբերությունը Հյուսիսային ԶԿՏ-ի զարգացած տնտեսական ճյուղերից մեկն է: Այն հիմնականում զարգացած է Դեբեդի գետավազանում (Լոռու մարզ): Աղստևի գետավազանը համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որոնք շշալցվում են: Դեբեդի գետավազանում կան մետաղական հանքավայրեր (պղինձ, ոսկի, մոլիբդեն, բազմազմետաղ, ֆելզիտ և դացիտ տուֆեր, հանքային ջրեր և այլն): Խոշոր ձեռնարկություններն են Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը, Շամլուխի հանքավայրը, Արմանիսի ոսկու բազմամետաղային հանքավայրը, Ալավերդու պղնձածուլական և հանքարդյունաբերական օբյեկտները: Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը գտնվում է Լոռու մարզի Շնող համայնքում, Դեբեդ գետի վտակ Շնող գետի ավազանում: Հանքավայրի արդյունահանման և վերամշակման ընթացքում առաջացած կեղտաջրերը որոշակիորեն մաքրումից հետո ուղղվում են Շնող գետ: Բացի այդ, այն բաց է թողնվում Խառնածոր և Փիջուտ վտակներ: Հանքավայրի տարածքում առկա է գործող պոչամբար: Շամլուխի հանքավայրը գտնվում է Շամլուխ գյուղի մոտ, Ախթալա գետի ավազանում: Հանքաքարի արդյունահանման և վերամշակման ընթացքում առաջացած կեղտաջրերը լցվում են Ախթալա գետ, հանքավայրի տարածքում առկա է գործող պոչամբար (Նահատակ): Նազիկի պոչամբարը Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի ՓԲԸ-ի երեք պոչամբարներից մեկն է, որը գտնվում է գործարանից 0.5 կմ հեռավորության վրա՝ Նազիկ գետի հովտում, և զբաղեցնում է 2 հա տարածք: Ներկայումս պոչամբարը փակված է, մակերեսը վերամշակված է և ծածկված բուսածածկույթով, սակայն ըստ դաշտային դիտարկումների տվյալների՝ պոչամբարի ռեկուլտիվացման աշխատանքները թերի են, և պոչամբարի մակերեսի վրա մեկուսացման պատճառով՝ մթնոլորտային տեղումները կլանվում են,



արտահոսքի տեսքով դուրս են գալիս ամբարտակի ստորին հատվածից և տարածվում տեղանքով և թափվում Ախթալա գետը:

Արմանիսի ոսկու բազմամետաղային հանքավայրը գտնվում է Ձորագետ գետի Չքնաղ վտակի ավազանում: Հանքաքարի արդյունահանման և վերամշակման ընթացքում առաջացած կեղտաջրերն ուղղվում են Չքնաղ գետ: Լոռու մարզի Ալավերդի քաղաքում պղնձածուլական և արդյունահանող ձեռնարկություններն ավելի քան 240 տարվա պատմություն ունեն, գործարանը ներկայումս աշխատում է շատ ցածր հզորությամբ, և հանքաքարի արդյունահանման և վերամշակման ընթացքում առաջացած կեղտաջրերն լցվում են Դեբեդ գետ: Դեբեդի ավազանում առկա են 8 պոչամբարներ, որոնցից միայն 3-ն է շահագործվում: Դեբեդի ավազանում կան մի շարք լքված հանքավայրեր, որոնք գտնվում են Դեբեդ գետի Տնածուտ (Տանծուտի շրջան), Լլվար (Ալավերդի (Մադան) շրջան), Ախթալա (Շամլուղ և Ախթալա շրջաններ), Հազվի (Հազվի շրջան), Սիսիգետ (Հանքածորի շրջան) վտակների և Աղստև գետի վտակ՝ Գոլովինո (Ֆիլովետովոյի շրջան) ավազանում: ԵՄՋԼ+ և «ԵՄ-ն» շրջակա միջավայրի համար Արևելյան գործընկեր երկրներում. Ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են որոշ լքված հանքավայրերի ազդեցությունները հարակից գետավազանների ջրի որակի վրա: Վիճակագրության կոմիտեի տվյալների հիման վրա, որոնք ստացվել են Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնից, ինչպես նաև կազմակերպված թափոնների հավաքագրում իրականացնող համայնքների, 2021 թվականին ընդհանուր առմամբ ստեղծվել է 265433.3 տոննա արդյունաբերական թափոն (262430.0 տոննա Դեբեդի գետավազանում և 3003.3 տոննա՝ Աղստևի գետավազանում): Այս ընդհանուրից, մոտավորապես 1.3%-ը փոխանցվել է այլ կազմակերպություններին, մշակվել, և ոչնչացվել կամ օգտագործվել է կազմակերպությունների կողմից, իսկ մնացած մեծ մասը տեղափոխվել և տեղակայվել է աղբավայրերում:

Լոռու մարզը, Դեբեդի գետավազանը, մեկ շնչին ընկնող արտադրական թափոնների քանակով ՀՀ-ում զբաղեցնում է 4-րդ տեղը (1237,2 կգ մեկ շնչի հաշվով) և 5-րդ տեղը մեկ քառակուսի կմ-ում (69086,0 կգ/կմ³): Աղստևի գետավազանում այս թվերը բավականին փոքր են և կազմում են համապատասխանաբար 25,0 կգ մեկ շնչի հաշվով և 1110,7 կգ 1 կմ² համար:

Հյուսիսային ՋԿՏ-ում կա զբոսաշրջության զգալի ներուժ: Այն, գեղատեսիլ և առողջ բնության շրջան է՝ հարուստ անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, ենթակառուցվածքներով:

Հյուսիսային ՋԿՏ-ում բեռների (երկաթուղային և ավտոմոբիլային) փոխադրումների մեծ մասը կատարվում է Դեբեդ ԳԱ-ով: Դեբեդ գետի ավազանով են անցնում Երևան-Գյումրի-Վանաձոր-Ալավերդի-Վրաստան երկաթուղին, ինչպես նաև Երևան-Ապարան-Վանաձոր-Ալավերդի-Վրաստան և Երևան-Սևան-Դիլիջան-Վանաձոր ավտոճանապարհները: Չնայած դրան, վտանգավոր ապրանքերով բեռնված մեքենաների վթարներ, որոնք կարող են նույնիսկ էպիգոդիկ ճնշում առաջացնել գետերի ջրերի վրա, չեն արձանագրվել: Ճանապարհների արտահոսքը նիկելի, պղնձի, ցինկի, կադմիումի, կապարի և պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինների (PAHs) հիմնական աղբյուրն է, որոնք առաջանում են բենզինի և այլ հանածո վառելիքի արտադրանքի այրման արդյունքում:

Հյուսիսային ՋԿՏ-ում հիմնական ճնշումներն ու ազդեցություններն են՝

Քաղաքային կեղտաջրերի արտահոսքը, (կոյուղաջրեր) 2023 թվականի հունվարի դրությամբ կազմել է 11,1 մլն մ³ տարեկան: Կոյուղու կեղտաջրերը կազմել են ընդամենը 123,38 մլն մ³: Արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերի 90-95%-ը չի հավաքվել և չի մաքրվել: Հյուսիսային ՋԿՏ-ի քաղաքային բնակավայրերի կենցաղային



արդյունաբերական կեղտաջրերն ուղղակիորեն հոսում են ջրային ռեսուրս, քանի որ կեղտաջրերի մաքրման կայանները բացակայում են կամ պատշաճ կերպով չեն գործում, ինչպես նաև կոյուղու խողովակաշարերը մաշված են, և դրանց մեծ մասը վերանորոգման կամ հիմնովին վերանորոգման կարիք ունի: Միայն Վանաձոր քաղաքում գործում է կոյուղու մեխանիկական մաքրման կայան, որի միջով անցնող կեղտաջրերի հոսքն ընդամենը 30 լ/վ է: Կեղտաջրերի մեծ մասն ուղղակիորեն թափվում է Փամբակ գետ՝ առանց մաքրման: Ավելին, մի շարք բնակավայրեր չունեն համապատասխան կոյուղու համակարգեր, ինչը հանգեցնում է կեղտաջրերի չկարգավորված արտահոսք դեպի գետեր:

Քաղաքային և արդյունաբերական կեղտաջրերի հեռացումը Հյուսիսային ԶԿՏ-ում 2023 թվականի հունվարի դրությամբ՝

Գետավազան	Քաղաքային կեղտաջրեր		Արդյունաբերական տարեկան կեղտաջրեր, մլն մ ³ /տարի
	Օրական ծավալ, մ ³ /օր	Տարեկան ծավալ, մլն մ ³ /տարի	
Դեբեդ	19290	7.04	5.74
Աղստև, Կուր գետի փոքր վտակներ	11010	4.02	1.35
Ընդամենը, Հյուսիսային ԶԿՏ	30300	11.08	7.09

Կեղտաջրերի արտահոսքի գնահատումը ցույց է տալիս, որ քաղաքային համայնքներից արտանետումների ընդհանուր ներդրումը կազմում է 57%, որի մի մասը կոյուղու ցանցով հոսում է անմիջապես հարակից գետը, իսկ մյուս մասը հանդես է գալիս որպես ոչ կետային ցրված աղտոտում: Գյուղական համայնքների ներդրումը կազմում է 47%, հանդես գալով որպես ոչ կետային ցրված աղտոտվածություն: Այսպիսով, տվյալները ցույց են տալիս, որ կետային աղբյուրներից քաղաքային կեղտաջրերը զգալի ճնշում ունեն Փամբակ գետի՝ Սպիտակ և Վանաձոր քաղաքներից հետո, Դեբեդ գետի՝ Ալավերդի քաղաքից հետո, Ձորագետ գետի՝ Ստեփանավանի տարածքում, Տաշիր գետի՝ Տաշիր քաղաքից հետո, Աղստև գետի՝ Դիլիջան և Իջևան քաղաքներից հետո: Տավուշ գետի՝ Բերդ քաղաքի հատվածում ջրի որակի վրա: Հյուսիսային ԶԿՏ-ի սննդի և ոչ պարենային արդյունաբերության կեղտաջրերը հիմնականում թափվում են կեղտաջրերի կոյուղատար, և դրանց ազդեցությունը ավելանում է կենցաղային կեղտաջրերի վրա: ԶԿՏ-ում սննդի արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում կենտրոնացված են Աղստևի գետավազանում, հատկապես Դիլիջանում, և արտադրական կեղտաջրերը թափվում են կոյուղաջրեր, այնուհետև՝ Աղստև գետ:

Հանքարդյունաբերության կեղտաջրեր. Լեռնահանքային արդյունաբերության ոլորտներից Դեբեդ գետի ավազանում ամենամեծն են Ալավերդու պղնձի կոմբինատը, Ախթալայի լեռնահանքային ձեռնարկությունները, Արմանիսի ոսկու բազմամետաղային հանքավայրը և Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը: Հանքարդյունաբերության կեղտաջրերը աղտոտված են ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, անագ) և սուլֆատներով, և թափվում բաց ջրային մարմիններ: Հաշվի առնելով ՀՀ ՇՄՆ «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի ջրի որակի մոնիթորինգի տվյալները, հանքարդյունաբերության ճնշումները նշանակալի են և առաջացնում են ծանր մետաղների կոնցենտրացիաների ավելացում Շնող և Ախթալա գետերում, Ալավերդի քաղաքից հետո Դեբեդ գետում:

Ցրված աղտոտումը պայմանավորված է լայնածավալ գործունեություններով, ինչպիսիք են գյուղատնտեսությունը և այլ աղբյուրներ: Ցրված աղտոտման մակարդակները կախված են ոչ միայն մարդածին գործոններից, ինչպիսիք են հողօգտագործումը և հողօգտագործման ինտենսիվությունը, այլ նաև բնական գործոններից, ինչպիսիք են կլիման, հոսքի



պայմանները և հողի հատկությունները: Ազոտի համար ցրված աղտոտման հիմնական ուղին ստորերկրյա ջրերն են, իսկ ֆոսֆորի համար՝ էրոզիան:

Գյուղատնտեսական մշակաբույսերի մշակում և պարարտանյութերի օգտագործում.

Դեբեդ և Աղստե գետերի ավազանում գյուղատնտեսական մշակաբույսերի զգալի տոկոսը կազմում են հացահատիկային, մշակաբույսերը, ինչպես նաև սեխը և դդումը: Աղստեի ԳԱ-ում 2021 թ. օգտագործվել է 169,9 տոննա ազոտի հիմքով պարարտանյութ՝ ընդգրկելով 567 հա պարարտացված հողատարածք: Սա գրեթե հավասար է ստանդարտին (1 հա մշակաբույսերի մշակման համար պահանջվում է 300 կգ ազոտական պարարտանյութ, ըստ ստանդարտի): Դեբեդի ԳԱ-ում 195000 հա գյուղատնտեսական նշանակության հողերի համար տարեկան օգտագործվում է մոտ 650 տոննա պարարտանյութ: Հաշվի առնելով օգտագործված պարարտանյութերի քանակը՝ կարելի է համարել, որ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակումը էական ազդեցություն չունի ջրային մարմինների որակի վրա, սակայն Դեբեդ և Աղստե գետերի ավազանների ջրի որակի մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ գետերի միջին և ստորին հոսանքներում նկատվում է նիտրիտ և նիտրատ իոնների կոնցենտրացիայի աճ, ինչը կարող է հետևանք լինել ավազանի վարելահողերի տարավազման:

Անասնաբուծություն. Արոտավայրերը զբաղեցնում են Հյուսիսային ԶԿՏ-ի գյուղատնտեսական հողերի մեծ մասը: Անասնաբուծությունը Հյուսիսային ԶԿՏ-ում գյուղատնտեսության ավանդական ճյուղ է: 2023 թ. հունվարի դրությամբ ԶԿՏ-ում գրանցվել է 105629 և 94577 գլուխ մանր եղջերավոր անասուն: Ֆերմաների տարածքում գոմաղբի վազումից առաջացած կեղտաջրերը հոսում են գետեր կամ ներթափանցում ստորերկրյա ջրեր՝ աղտոտելով ջրային ռեսուրսներն ազոտով, ֆոսֆորով և այլ օրգանական միացություններով: ԶԿՏ-ում 2023 թ. հունվարի դրությամբ անասնաբուծությունից արտանետվող ընդհանուր տարեկան կեղտաջրերը, ինչպես նաև ազոտի և ֆոսֆորի տարեկան արտանետումները, հաշվարկվել են՝ ելնելով մեկ շնչին ընկնող անասունի և գոմաղբի քանակից: Վերլուծությունների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ Հյուսիսային ԶԿՏ-ում անասնաբուծությունը որոշակիորեն ազդեցություն ունի ջրային ռեսուրսների որակի վրա:

Գերարածեցումը հանգեցնում է բուսական ծածկույթի կորստի և հողի էրոզիայի, ինչը նույնպես ճնշում է ջրային ռեսուրսների որակի վրա: Հյուսիսային ԶԿՏ-ում գերարածեցման գնահատումը հիմնված է Հայաստանում կիրառվող ստանդարտների վրա, որոնց համաձայն՝ մեկ խոշոր եղջերավոր անասունի համար պահանջվում է 0,5 հա արոտ՝ որպես բավարար արոտավայր, իսկ մեկ ոչխարի համար՝ 0,05 հա: ԶԿՏ-ում արոտավայրերի ընդհանուր մակերեսը կազմում է 171889.1 հա, իսկ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 105629, մանր եղջերավոր անասուններինը՝ 94577: Հյուսիսային ԶԿՏ-ում գետավազանում մեկ խոշոր եղջերավոր անասունի համար հասանելի է 0,6 հա, իսկ արածեցման նորմերը գերազանցող մեկ մանր եղջերավոր անասունի համար՝ 0,55 հա: Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ գերարածեցումը կարող է համարվել ճնշում Հյուսիսային ԶԿՏ-ի ջրային ռեսուրսների որակի վրա:

Քանակական ճնշումներ. ջրառ և ջրամատակարարման ծառայություններ Համաձայն ՀՀ ՇՄՆ ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների տվյալների՝ 2023 թվականի հունվարի դրությամբ Հյուսիսային ԶԿՏ-ում ջրօգտագործումը հիմնականում եղել է խմելու կենցաղային ոռոգման, արդյունաբերական և հիդրոէներգետիկ նպատակներով: Հաշվի առնելով, որ հիդրոէներգետիկ ջրօգտագործումը ոչ սպառողական է, ջրօգտագործման բաշխվածությունը ըստ ոլորտների հետևյալն է. խմելու-կենցաղային նպատակներով ջրառը կազմում է



ամենամեծ տեսակարար կշիռը, ոռոգմանը, որին հաջորդում է արդյունաբերական ջրօգտագործումը, ձկնաբուծությունը, իսկ վերջում՝ ջրարբիացումը:

Գետավազան	Ընդհանուր ջրօգտագործում	Ջրօգտագործումն ըստ ոլորտների մլն. մ ³					
		Խմելու-Կենցաղային	Ոռոգում	Արդյունաբերական	Ձկնաբուծություն	Ջրարբիացում	Հիդրոէներգետիկա
Դեբեդ	2202.2	83.98	40.93	16.43	2.92	0.26	2057.7
Աղստև	1051.8	16.42	8.90	1.18	3.16	0.20	1021.9
Կուր գետի փոքր վտակներ	144.6	5.60	5.76	0.05	0.00	0.08	133.1
Ընդամենը, Հյուսիսային ՋԿՏ	3398.6	106.0	55.59	17.66	6.08	0.54	3212.7

Ջրի օգտագործումը կենցաղային-խմելու նպատակներով. 2023 թ. հունվարի դրությամբ Հյուսիսային ՋԿՏ-ում կենցաղային խմելու նպատակով ջրառը, համաձայն ջրօգտագործման թույլտվությունների, կազմել է 106,0 մլն մ³/տարի, որի զգալի մասը՝ 83,98 մլն մ³/տարի օգտագործվում է Դեբեդի գետավազանում: Աղստևի գետավազանում կենցաղային նպատակներով վերցվում է տարեկան 16,42 մլն մ³ ջուր, իսկ Կուր գետի փոքր վտակներում՝ ընդամենը 5,60 մլն մ³/տարի: Հյուսիսային ՋԿՏ-ի բոլոր բնակավայրերում կենցաղային-խմելու նպատակով ջրամատակարարման համակարգը հիմնականում 40-60 տարեկան է և մասամբ խափանված: Ընդհանուր առմամբ, Հյուսիսային ՋԿՏ-ում կոմունալ-կենցաղային ջրամատակարարման համակարգում ջրի կորուստները մեծ են: 2023թ. հունվարի դրությամբ, ըստ քաղաքների, այն կազմել է. ք. Վանաձորում՝ 75.5%, ք. Սպիտակում՝ 58,2%, ք. Ալավերդում՝ 58,2%, ք. Իջևանում՝ 55,8%, ք. Դիլիջանում՝ 47%:

Ջրի օգտագործումը ոռոգման նպատակով. 2023 թ. հունվարի դրությամբ Հյուսիսային ՋԿՏ-ում ոռոգման նպատակով ջրօգտագործումը, համաձայն ջրօգտագործման թույլտվությունների, կազմել է մոտ 55,6 մլն մ³, որի մեծ մասն օգտագործվում է Դեբեդ գետի ավազանում՝ 40,93 մլն մ³: Ոռոգման ենթակառուցվածքը քայքայված է: Կիրառվող ոռոգման մեթոդները (հիմնականում մակերեսային) ժամանակակից չեն, ինչի արդյունքում ջրի ընդհանուր կորուստները հասնում են մինչև 40-50%:

Արդյունաբերական նպատակներով ջրօգտագործումը կազմում է 17,66 մլն մ³, որի մեծ մասը՝ 16,43 մլն մ³, օգտագործվում է Դեբեդի ԳԱ-ում: Արդյունաբերական նպատակներով օգտագործվող 17,66 մլն մ³ ջրից միայն 13,9 մլն մ³ ջուր է օգտագործվում հանքարդյունաբերության համար: Հյուսիսային ՋԿՏ-ում արդյունաբերական ջրառներն էական ճնշում չեն գործադրում ջրային ռեսուրսների քանակի վրա:

Հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության համար ջրօգտագործում: 2023 թ. հունվար ամսվա տվյալներով՝ Հյուսիսային ՋԿՏ-ում կա 58 ՓՀԷԿ, որից 48-ը շահագործվում է: 6 ՓՀԷԿ-եր տեղակայված են ջրանցքների վրա: Հիդրոէներգետիկական էական ճնշում չի գործադրում գետավազանի ջրային ռեսուրսների քանակի և որակի վրա: Հյուսիսային ՋԿՏ-ում մարդկային գործունեության բնույթն այնպիսին է, որ զգալի ճնշում է գործադրում ջրի որակական և քանակական ցուցանիշների վրա:

Հիմնական նշանակալի ճնշումները հետևյալն են.

- քաղաքային կեղտաջրեր. կետային և ոչ կետային ազդեցություն



Հանքարդյունաբերության` Հյուսիսային ՋԿՏ-ում կա 58 ՓՀԷԿ, որից 48-ը շահագործվում է: 6 ՓՀԷԿ-եր տեղակայված են ջրանցքների վրա: Հիդրոէներգետիկան էական ճնշում չի գործադրում

- կեղտաջրեր. կետային և ոչ կետային ազդեցություն,
- գյուղատնտեսություն. անասնաբուծություն, ոչ կետային ազդեցություն

Հյուսիսային ՋԿՏ-ի սահմաններում է գտնվում Դիլիջան ազգային պարկը: «Դիլիջան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունն ունի 33765 հա տարածք՝ հիմնականում ՀՀ Տավուշի մարզում, փոքր մասով՝ Լոռու և Գեղարքունիքի մարզերում, տարածվում է Փամբակի, Արեգունու, Միափորի, Իջևանի և Հալաբի հովիտների լանջերին, Աղստև և Գետիկ գետերի ավազաններում ծովի մակարդակից 1070 -2900 մ բարձրությունների վրա, և ունի 8167 հա բուֆերային գոտի:«Դիլիջան» ազգային պարկի տարածքը հարուստ է մակերևութային ջրային մարմիններով, ինչպիսիք են գետերը, լճերը, առուները, հանքային աղբյուրները:

Արգելավայրեր: Հյուսիսային ՋԿՏ-ում կա 9 արգելավայր, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 256,08 կմ² կամ Հյուսիսային ՋԿՏ-ի (7185 կմ²) մոտ 3,56%-ը: Արգելավայրերից 5-ը գտնվում են Աղստև գետի («Ախնաբաղի պուրակ», «Արջաթխլենի պնդուկ», «Գետիկ», «Գանձաքար», «Իջևան»), 2-ը՝ Դեբեդի գետի («Գյուլագարկ», «Մարգահովիտ») և 1-ը՝ Կուր գետի փոքր վտակների («Ձիկատար») գետավազաններում:

Բնության հուշարձաններ: Հյուսիսային ՋԿՏ-ում կա 34 բնության հուշարձան, որից 21-ը երկրաբանական, 3-ը՝ հիդրոլոգիական, 9-ը՝ կենսաբանական և 1-ը՝ բնապատմական: Բնության հուշարձանների ցանկը հաստատված է ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմամբ: Ջրաբանական հուշարձանները (Շամլուղ լճակ, Դսեղ Ծովեր և Թոչկանի ջրվեժ) գտնվում են Դեբեդի գետավազանում:

Հյուսիսային ՋԿՏ-ում առանձնացվել են ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանման, ջրապահպան, էկոտոն և անօտարելի գոտիներ: Ջրային էկոհամակարգի սանիտարական պահպանման գոտիները սահմանազատելու նպատակով այդ ջրային ռեսուրսների երկայնքով ստեղծվել են 90 մ շառավղով գոտիների շերտեր: Ջրային էկոհամակարգի սանիտարական պահպանման գոտիները կազմում են 9,275 կմ² տարածք կամ Հյուսիսային ՋԿՏ-ի (7185 կմ²) մոտ 0,13%-ը: Հոսքի ձևավորման գոտին ՀՀ ջրային օրենսգրքի համաձայն՝ սահմանվում է այն տարածքը, որտեղ ձևավորվում է գետը: Ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանման գոտիները սահմանվում են որպես տարածքներ, որտեղ հիդրոերկրաբանական և ստորերկրյա ջրային հորիզոնները պետք է պահպանված լինեն կենցաղային կեղտաջրերի աղտոտումից: Այս գոտիները ստեղծվել են 150 մ շառավղով 246 հորատանցքերի համար՝ կազմելով 13,463 կմ² տարածք, որը կազմում է Հյուսիսային ՋԿՏ-ի (7185 կմ²) ընդհանուր տարածքի մոտավորապես 0,19%-ը:

Էկոտոնային տարածքները ներառում են գետերի, լճերի, լճակների, բնական ջրահոսքերի և ափամերձ տարածքների առավել խոցելի տարածքները: Այս գոտիները տարանջատվել են 150 մ շառավղով: Հյուսիսային ՋԿՏ-ում ջրանցքների անօտարելի գոտիները տարանջատելու համար ամբողջ ջրանցքում առանձնացվել են 10 մ երկարությամբ գոտիները: Ջրանցքների անօտարելի գոտիները և դրանց հարակից



- գոտիները միասին կազմում են ընդհանուր 4,344 կմ² կամ Հյուսիսային ՋԿՏ-ի ընդհանուր տարածքի մոտ 0,06%-ը:
- Ջրամբարների պատվարների համար անօտարելի գոտիները տարանջատելու համար 6 պատվարների համար անօտարելի գոտիները սահմանել են 100 մ: Ջրամբարների պատվարների անօտարելի գոտիները կազմում են 0,861 կմ² կամ Հյուսիսային ՋԿՏ-ի ընդհանուր մակերեսի մոտ 0,012%-ը:

Արդյունավետ աղբահանությունը առաջնային է Հյուսիսային ՋԿՏ-ի կայուն կառավարման համար: 2005թ.-ին Լոռու և Տավուշի մարզերում աղբի միայն մի փոքր մասն էր պատշաճ կերպով հավաքվում կամ հեռացվում տարհանման համակարգերի միջոցով, ինչը հանգեցրել է շրջակա միջավայրի աղտոտմանը և խոչընդոտել թափոնների կառավարման գործունեությանը:

Այնուամենայնիվ, 2005 թվականից սկսած զգալի բարելավումներ են տեղի ունեցել: 2021 թվականին Լոռու աղբի 81%-ը և Տավուշի 62%-ն արդեն պատշաճ կերպով հեռացվում կամ հավաքվում է տարհանման համակարգերի միջոցով: Այս առաջընթացը նվազեցնում է շրջակա միջավայրի և ստորերկրյա ջրերի աղտոտման վտանգը: Ավելին, կանխատեսվում են շարունակական ջանքեր երկու մարզերում աղբահանության պրակտիկայի հետագա բարելավման ուղղությամբ՝ նպաստելով Հյուսիսային ՋԿՏ-ի ընդհանուր էկոլոգիական առողջությանը և երկարաժամկետ կայունությանը:

Հաշվի առնելով այս փոփոխությունները՝ քաղաքականություն մշակողները կարող են արդյունավետ ռազմավարություններ ձևավորել Հյուսիսային ՋԿՏ-ի ջրային ռեսուրսների կայուն կառավարման համար: Բնակավայրերի տարբեր տեսակների կողմից ներկայացված մարտահրավերների լուծումը, թափոնների կառավարման խրախուսումը և ջրամատակարարման համակարգերի օպտիմալացումը կենսական քայլեր են ավազանի համայնքների և նրա ջրային ռեսուրսների համար առողջ և բարգավաճ ապագա ապահովելու համար:

Հյուսիսային ՋԿՏ-ում առկա են հետևյալ հիմնական խնդիրները.

- Հանքարդյունաբերությունը և լքված հանքավայրերը զգալի ազդեցություն ունեն ջրային ռեսուրսների որակի վրա և առաջացնում են ծանր մետաղների կոնցենտրացիաների աճ Շնող և Ախթալա գետերում, Ալավերդի քաղաքից հետո Դեբեդ գետում:
- Արդյունաբերական նպատակով ջրօգտագործումը Հյուսիսային ՋԿՏ-ում 17,66 մլն մ³ ջրից միայն 13,9 մլն մ³ ջուր է օգտագործվում հանքարդյունաբերության համար:
- Անասնաբուծությունը որոշակիորեն ազդեցություն ունի Հյուսիսային ՋԿՏ-ում ջրային ռեսուրսների որակի վրա: Պարարտանյութերի կիրառությունը զգալի ազդեցություն չունի ավազանի գետերի ջրերի որակի վրա:
- Տրանսպորտային միջոցների փոխադրումը կարող է ազդեցություն ունենալ ջրային ռեսուրսների վրա, սակայն թվային գնահատում հնարավոր չի կատարել:
- Քաղաքային կեղտաջրերը չեն մաքրվում և դրանք անմիջականորեն կամ կեղտաջրերի հեռացման համակարգի միջոցով հոսում են ավազանի գետեր, զգալի ճնշում առաջացնելով Փամբակ գետի՝ Սպիտակ և Վանաձոր քաղաքներից հետո:



Դեբեդ գետի՝ Ալավերդի քաղաքից հետո, Աղստև գետի՝ Իջևան քաղաքից հետո, Տավուշ գետի՝ Բերդ քաղաքի հատվածում, ջրերի որակի վրա:

- Ընդհանուր առմամբ, Հյուսիսային ՋԿՏ-ում կոմունալ-կենցաղային ջրամատակարարման համակարգում ջրի կորուստները մեծ են: 2023թ. հունվարի դրությամբ, ըստ քաղաքների, այն կազմել է. ք. Վանաձորում՝ 75.5%, ք. Սպիտակում՝ 58,2%, ք. Ալավերդում՝ 58,2%, ք. Իջևանում՝ 55,8%, ք. Դիլիջանում՝ 47%: Ոռոգման համակարգում ջրի ընդհանուր կորուստները հասնում են մինչև 40-50%:
- Արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերի 90-95%-ը չի հավաքվում և չի մաքրվում, դրանք անմիջականորեն կամ կեղտաջրերի հեռացման համակարգի միջոցով հոսում են ավազանի գետեր՝ վատացնելով ջրային մարմինների ջրի որակը:
- Աղբավայրերը և կոշտ կենցաղային թափոնները կարող են զգալի ճնշում գործադրել Հյուսիսային ՋԿՏ-ի ստորերկրյա և մակերևութային ջրերի վրա, սակայն թվային գնահատում հնարավոր չի կատարել:
- Ձկնաբուծության նպատակով ջրօգտագործումը կազմում է 6,08 մլն մ³, որը հիմնականում տեղակայված է գետափնյա տարածքներում և էական ճնշում չի գործադրում ջրային ռեսուրսների քանակի և որակի վրա:
- Հիդրոէներգետիկան էական ճնշում չի գործադրում գետավազանի ջրային ռեսուրսների քանակի և որակի վրա:
- Խմելու-կենցաղային ջրօգտագործման նպատակով վերցվող ջրառը էական ազդեցություն չունի Հյուսիսային ՋԿՏ-ի ջրային ռեսուրսների քանակի վրա:

Բնապահպանական նպատակները պետք է սահմանվեն մակերևութային և ստորերկրյա ջրերի լավ կարգավիճակն ապահովվելու, ջրավազանի ազգային ջրային պաշարները պահպանելու և ջրային մարմինների կարգավիճակի վատթարացումը կանխարգելելու նպատակով: Հյուսիսային ՋԿՏ-ում ջրային ռեսուրսների, ռազմավարական և ազգային ջրային պաշարների վերբերյալ տվյալները բերված են աղյուսակում:

Ջրային ռեսուրսներ և ջրային պաշարներ	Դեբեդ	Աղստև	Քուր գետի փոքր վտակներ	Հյուսիսային ՋԿՏ
Օգտագործելի ջրային ռեսուրսներ, մլն մ³				
Գետային հոսք	372.83	210.0	81.30	664.13
Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները, այդ թվում՝ A+B կարգով հաստատված աղբյուրների միջին տարեկան հոսքը	258.79*	85.60*	20.21*	364.59*
Ընդամենը	631.62	295.601	101.51	1,028.73
Ռազմավարական ջրային պաշարներ, մլն մ³				
Բնական լճերի ծավալի 1/3 մասը	0.34	0.06	-	0.40
Ջրամբարների մեղյալ ծավալի 2/3 մասը	0.10	1.30	1.40	2.80
Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները, այդ թվում՝ C1 կարգով հաստատված	58.90	17.87	11.56	88.33
Ընդամենը	59.34	19.23	12.96	91.53
Ազգային ջրային պաշարներ, մլն մ³				



Բնական լճերի ծավալի 2/3 մասը	0.69	0.12	0.00	0.81
Ջրամբարների մեղյալ ծավալի 1/3 մասը	0.02	0.70	0.70	1.42
Ձնաբծեր և ֆիռնային դաշտեր	-	-	-	-
Ստորերկրյա ջրերի պաշարները կամ խորքային հոսքը, այդ թվում C ₂ կարգով հաստատված	71.90	23.36	15.19	110.45
Ընդամենը	72.61	24.18	15.89	112.67
Բնապահպանական թողք	432.10	84.67	23.19	539.96

Հյուսիսային ՋԿՏ-ում բնապահպանական նպատակներին հասնելու համար սահմանվել է միջոցառումների ծրագիր՝ համաձայն ԵՄ ՋՇԴ-ի 11-րդ հոդվածի 3-րդ կետի, հիմնական միջոցառումները նվազագույն պահանջներն են, որոնք պետք է բավարարվեն 4-րդ հոդվածով նախատեսված բնապահպանական նպատակներին հասնելու համար: Հիմնական միջոցառումները դասակարգվում են հետևյալ կերպ.

1) Ջրային ոլորտում գործող օրենսդրության և բնապահպանական այլ օրենսդրության իրականացման համար անհրաժեշտ միջոցառումներ, ինչպիսիք են.

- ԵՄ դիրեկտիվներ, որոնք ներառված են ՀՀ-ԵՄ համաձայնագրում (Քաղաքային կեղտաջրերի մաքրման հրահանգ 91/271/EEC; Նիտրատների դիրեկտիվ 91/676/EEC; Խմելու ջրի դիրեկտիվ 98/83/EC; Ապրելավայրերի մասին դիրեկտիվ 92/43/EEC)
- Ջրի հետ կապված ազգային օրենսդրություն:

- 2) ջրօգտագործման ծախսերի վերականգնման սկզբունքի կիրառման միջոցառումներ,
- 3) ջրի արդյունավետ և կայուն օգտագործմանը նպաստող միջոցառումներ,
- 4) խմելու ջրի աղբյուրների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ,
- 5) մակերևութային և ստորերկրյա ջրերի ջրառի և ջրառի վերահսկման միջոցառումներ,
- 6) կետային և ցրված աղտոտման աղբյուրների վերահսկման միջոցառումներ,
- 7) ստորերկրյա ջրեր ուղղակի բացթողումը կարգավորող միջոցառումներ,
- 8) առաջնահերթ նյութերի կառավարման միջոցառումներ,
- 9) մակերևութային ջրերի ֆիզիկական փոփոխությունները վերահսկելու միջոցառումներ,
- 10) միջոցառումներ, որոնք վերահսկում են ցանկացած այլ գործողություն, որը կարող է ազդել ջրի կարգավիճակի վրա,
- 11) պատահական աղտոտումը կանխելու միջոցառումներ:

Նշված ջրային կառավարման խնդիրների ազդեցությանն ուղղված միջոցառումները լուծելու համար առաջարկվում են հետևյալ հիմնական միջոցառումները, որոնք հաշվի են առնում Հյուսիսային ՋԿՏ-ում առկա բոլոր խնդիրները, ճնշման տեսակները:

Ջրային ռեսուրսների կառավարման բարելավում

- ջրային ռեսուրսների օրենսդրության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ,
- ինստիտուցիոնալ կարողությունների, այդ թվում նաև տարածքային ջրային ռեսուրսների կառավարման մարմինների ամրապնդմանն ուղղված միջոցառումներ,
- լավագույն գյուղատնտեսական փորձի կիրառում. ընթացիկ գյուղատնտեսական փորձի վերանայում, ներառյալ թունաքիմիկատների օգտագործումը, կերտիկ կառավարումը, ոռոգումը և արածեցումը:



Տեխնիկական միջոցառումներ

- ԿՄԿ-ների վերականգնում և կառուցում,
- ազլումերացիաներից դուրս (500 բն.-ից պակաս) նորարարական ԿՄԿ-երի ներդրում,
- հանքարդյունաբերության ադտոտվածության նվազեցում,
- բարձրացնել ջրի պահեստային և ռազմավարական ջրային պաշարները՝ կառուցելով 3 նոր ջրամբարներ (Կողբ, Հախում և Գետիկվանք) և վերականգնելով 2 ջրամբարներ (Այգեձոր և Տավուշ),
- լքված հանքավայրերի (Տանձուտ, Ալավերդի, Շամլուղ, Ֆիոլետովո, Հազվի, Հանքածոր, Ախթալա) և Նազիկի փակ պոչամբարի ռեկուլտիվացիա,
- կոշտ թափոնների կառավարման բարելավում. սանիտարական աղբավայրերի կառուցում:

Հյուսիսային ՋԿՏ-ում առաջարկվում է կառուցել 7 ԿՄԿ: ԿՄԿ-ները կապահովեն կեղտաջրերի առաջնային (մեխանիկական) և երկրորդային (կենսաբանական) մաքրում, Հյուսիսային ՋԿՏ-ում առաջարկվող ԿՄԿ-ների նախնական ֆինանսական գնահատականը հետևյալն է՝

Ազլումերացիա	Ընդհանուր բնակչությունը	ԿՄԿ-ի տեսակը	Ընդհանուր արժեքը, հազար ՀՀ դրամ	ԿՄԿ (ՀՀ դրամ/մեկ շնչին
Գործող ԿՄԿ-ի վերանորոգում				
Վանաձոր	87662	Առաջնային մաքրման կառուցվածքներ	566,038	6.5
		Կենսաբանական մաքրման կառուցվածքներ	1,103,774	12.6
		Կարգավորման աշխատանքներ	28,302	0.3
Սպիտակ	15174	Առաջնային մաքրման կառուցվածքներ	102916	6,8
		Կենսաբանական մաքրման կառուցվածքներ	200686	13,2
		Կարգավորման աշխատանքներ	5146	0,3
Ալավերդի	15329	Առաջնային մաքրման կառուցվածքներ	104822	6,8
		Կենսաբանական մաքրման կառուցվածքներ	204403	13,3
		Կարգավորման աշխատանքներ	5241	0,3
Ստեփանավան	12410	Առաջնային մաքրման կառուցվածքներ	80863	6,5
		Կենսաբանական մաքրման կառուցվածքներ	157682	12,7
		Կարգավորման աշխատանքներ	4043	0,3
Դիլիջան	20544	Առաջնային մաքրման կառուցվածքներ	134771	6,6
		Կենսաբանական մաքրման կառուցվածքներ	262803	12,8
		Կարգավորման աշխատանքներ	6739	0,3
Իջևան	27855	Առաջնային մաքրման կառուցվածքներ	182593	6,6
		Կենսաբանական մաքրման կառուցվածքներ	356056	12,8
		Կարգավորման աշխատանքներ	9130	0,3
Ճամբարակ	8013	Առաջնային մաքրման կառուցվածքներ	52901	6,6
		Կենսաբանական մաքրման կառուցվածքներ	103156	12,9
		Կարգավորման աշխատանքներ	2645	0,3

Ազլումերացիաներից դուրս կեղտաջրերի մաքրման կայանների համար առաջարկվում է իրականացնել իրագործելիության ուսումնասիրություն և տեխնիկատնտեսական հիմնավորում: Առաջարկվում է իրականացնել 18-ամյա տեխնիկատնտեսական հիմնավորում Հյուսիսային ՋՏԲ-ի շուրջ 92 համայնքների համար, որտեղ բնակչությունը գերազանցում է 500 բնակչի սահմանային արժեքը: Այն կանցկացվի ազգային փորձագետների թիմի հետ միջազգային փորձագետների ներգրավմամբ: Ուսումնասիրությունը կներառի դաշտային հետազոտություններ և աշխատասեղան, ինչպես նաև կառաջարկի կեղտաջրերի հավաքման



- մաքրման և հեռացման տարբերակներ վերը նկարագրված համայնքների կամ համայնքների խմբի համար՝ ներառյալ նախնական նախագծումը և ծախսերի նախահաշիվները:
- Տեխնիկատնտեսական հիմնավորման կատարման նախնական արժեքը Հյուսիսային ԶԿՏ-ի շուրջ 92 համայնքների համար գնահատվում է 495 մլն դրամ:

Ջրամբարների կառուցման և վերականգնման համար նախնական ֆինանսական գնահատականը

Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ծավալը, մ ³	Ներդրումային արժեքը, այդ թվում՝ նախագծային, տեխնիկական հսկողության և շինարարական աշխատանքներ, հազ ՀՀ դրամ
Ջրամբարների կառուցում		
Կողբ	2 000 000	1 287 000
Հախում-2	2 100 000	1 125 000
Գետիկավանք	35 000 000	19 620 000
Կառուցման ընդհանուր արժեքը		22 032 000
Ջրամբարների վերականգնում և վերազինում		
Այգեձոր		540 000
Տավուշ		472 500
Վերականգնման ընդհանուր արժեքը		1 012 500
Ընդհանուր		23 044 500

Հիմնական տեխնիկական միջոցառումները և նախնական ֆինանսական գնահատականները ամփոփված են ստորև

N	Միջոցառման անվանումը	Ենթամիջոցառում	Կատարող/ համակատարող	Կատարման ժամկետը	Նախնական ֆինանսական գնահատականը, հազար ՀՀ դրամ
1.	7 ԿՄԿ-ների վերականգնում և կառուցում (Սպիտակ, Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Դիլիջան, Իջևան, Ճամբարակ)	<ul style="list-style-type: none"> • Իրականացնել տեխնիկատնտեսական հիմնավորում՝ գնահատելու ծրագրի տեխնիկական, տնտեսական և բնապահպանական կենսունակությունը • Մշակել ԿՄԿ-ի մանրամասն նախագիծ • Իրականացնել շինարարական աշխատանքները 	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2025-2030	5 566 000
2.	Ազդմերացիաներից դուրս ԿՄԿ-ների կառուցում	<ul style="list-style-type: none"> • Իրականացնել տեխնիկատնտեսական հիմնավորում՝ գնահատելու ծրագրի տեխնիկական, տնտեսական և բնապահպանական կենսունակությունը: • Մշակել ԿՄԿ-ի մանրամասն նախագիծ • Իրականացնել շինարարական աշխատանքները 	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2025-2030	495 000
3.	3 ջրամբարների կառուցում (Կողբ, Հախում և	<ul style="list-style-type: none"> • Ջրամբարների մանրամասն նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում 	Տարածքային կառավարման և ենթակառուցվածք	2024-2026	22 032 000



N	Միջոցառման անվանումը	Ենթամիջոցառում	Կատարող/ համակատարող	Կատարման ժամկետը	Նախնական ֆինանսական գնահատականը, հազար ՀՀ դրամ
	Գետիկվանք)	<ul style="list-style-type: none"> Տեխնիկական և տնտեսական ուսումնասիրությունների իրականացում, Շինարարական աշխատանքների իրականացում 	Ների նախարարություն Ջրային կոմիտե		
4.	2 ջրամբարների վերականգնում և վերազինում (Այգեծոր և Տավուշ)	<ul style="list-style-type: none"> Ջրամբարների մանրամասն նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում Վերականգնման և վերազինման աշխատանքների իրականացում 	Տարածքային կառավարման և ենթակառուցվածք ների նախարարություն Ջրային կոմիտե	2024-2025	1 012 500
5.	Ըրված մետաղական հանքերի աղտոտման մեղմում. Նագիկի փակ պոչամբարի վերականգնում	<ul style="list-style-type: none"> Հետազոտել տարածքի մակերևութային և ստորերկրյա ջրերի, հողի և բուսականության աղտոտվածությունը: Գնահատել այն տարածքները, որտեղ կենսաբանական վերականգնում է տեղի ունենում՝ վերականգնման և ռեկոլտիվացման ծրագրերի մշակման համար: Մշակել և իրականացնել տեղայնացված, հատուկ ռեկոլտիվացիոն ծրագիր: Ստեղծել շրջակա միջավայրի մոնիտորինգի երկարաժամկետ ծրագիր՝ իրականացվող միջոցառումների արդյունավետությունը գնահատելու համար: 	Տարածքային կառավարման և ենթակառուցվածք ների նախարարություն	Իրականացման ժամկետը կախված է ֆինանսավորման առկայությունից	4,000,000 (Արժեքը ներկայացված է միայն վերականգնման և տարածքի ուսումնասիրության ToR-ի մշակման համար)
6.	Մեղմացնել լքված մետաղական հանքերի աղտոտումը. լքված հանքարդյունաբերական թափոնների հեռացման 7 տարածքների վերականգնում (Տանձուտ, Ալավերդի, Շամլուղ, Ֆիոլետովո, Հագվի, Հանքածոր, Ախթալա)	<ul style="list-style-type: none"> Հետազոտել տարածքի մակերևութային և ստորերկրյա ջրերի, հողի և բուսականության աղտոտվածությունը: Գնահատել այն տարածքները, որտեղ կենսաբանական վերականգնում է տեղի ունենում՝ վերականգնման և վերականգնման ծրագրերի մշակման համար: Մշակել և իրականացնել տեղայնացված, հատուկ ռեկոլտիվացիոն ծրագիր: Ստեղծել շրջակա միջավայրի մոնիտորինգի երկարաժամկետ ծրագիր՝ իրականացվող միջոցառումների արդյունավետությունը գնահատելու համար: 	Տարածքային կառավարման և ենթակառուցվածք ների նախարարություն	Իրականացման ժամկետը կախված է ֆինանսավորման առկայությունից	28,000,000 (Արժեքը ներկայացված է միայն վերականգնման և տարածքի ուսումնասիրության ToR-ի մշակման համար))
7.	Գործող մետաղական հանքերից աղտոտվածության կառավարման մեծացում	<ul style="list-style-type: none"> Իրականացնել գործող և չգործող 8 պոչամբարների տեխնիկատնտեսական հիմնավորում 	Տարածքային կառավարման և ենթակառուցվածք ների նախարարություն	Իրականացման ժամկետը կախված է ֆինանսավորման առկայությունից	4,000,000 (Արժեքը ներկայացված է միայն վերականգնման և տարածքի ուսումնասիրության ToR-ի մշակման համար)
8.	Կոշտ թափոնների կառավարման բարելավում. սանիտարական աղբավայրերի կառուցում	<ul style="list-style-type: none"> Թափոնների աուդիտի անցկացում՝ առաջացած պինդ թափոնների կազմն ու ծավալը հասկանալու համար: Աղբյուրների կրճատման ռազմավարությունների իրականացում, ինչպիսիք են վերամշակումը, կոմպոստացումը և թափոնների նվազագույնի հասցնելու ծրագրերը: Ապօրինի թափելու և աղբ թափելու 	Տարածքային կառավարման և ենթակառուցվածք ների նախարարություն	Իրականացման ժամկետը կախված է ֆինանսավորման առկայությունից	4,000,000 (Արժեքը ներկայացված է միայն վերականգնման և տարածքի ուսումնասիրության ToR-ի մշակման համար)



N	Միջոցառման անվանումը	Ենթամիջոցառում	Կատարող/ համակատարող	Կատարման ժամկետը	Նախնական ֆինանսական գնահատականը, հազար ՀՀ դրամ
		<p>համար խիստ կանոնակարգերի և տույժերի կիրառում:</p> <ul style="list-style-type: none"> Սանիտարական աղբավայրերի կառուցում՝ տարրավազման և մաքրման համակարգերով՝ աղբավայրերից հեղուկ արտահոսքը կառավարելու համար: Աղբավայրերի մոնիտորինգ և կանոնավոր սպասարկում՝ բնապահպանական չափանիշներին և կանոնակարգերին համապատասխանությունն ապահովելու համար: 			

Պատճառաբանական մաս. ՀՀ Կառավարության որոշման սույն նախագծով հաշվարկվել են Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները: Կատարվել է Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի (այսուհետ՝ ՋԿՏ) ջրառաջարկի և ջրապահանջարկի վերլուծություն՝ նախագծային 6 տարվա ժամանակահատվածի համար: Ամփոփելով հաշվետվության գնահատման և փորձաքննության արդյունքները՝ պետք է նշել, որ նախագիծը մշակվել է ՀՀ ջրային օրենսգրքի, «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» և «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքների, Եվրոպական միության Ջրի շրջանակային դիրեկտիվի և այլ ոլորտային նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, որը կունենա կարևոր ռազմավարական նշանակություն: Այն նպատակ ունի աջակցել ջրային ռեսուրսների կառավարման մարմիններին, ներառյալ՝ Հյուսիսային ջրավազանային տարածքային կառավարման բաժնին, քաղաքականություն մշակողներին և հանրությանը, ջրային ռեսուրսների ոլորտում որոշումների կայացման գործում: Ջրավազանային կառավարման պլանի կարևոր մասն են հանդիսանում, Պլանի նախագծի հանրային խորհրդակցությունները տեղական ինքնակառավարման մարմինների, ավազանի բնակիչների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Այս գործընթացը օգնում է հավաքել տեղեկատվություն ջրավազանում ջրային ռեսուրսների կառավարման և դրանց հետ կապված այլ խնդիրների վերաբերյալ, ապա դրա հիման վրա համապատասխան կերպով փոփոխել ջրօգտագործումը, և արդիականացնել միջոցառումների ծրագիրը: Համաձայն ՋՇ Դ 4-րդ հոդվածի, ՋԿՊ-ի իրականացման միջոցով պետք է հասնել հետևյալ բնապահպանական նպատակներին.

- մակերևութային ջրային մարմինների էկոլոգիական/քիմիական լավ կարգավիճակ, ջրային մարմինների էկոլոգիական լավ պոտենցիալ և քիմիական լավ կարգավիճակ,
- ստորերկրյա ջրային մարմինների քիմիական/քանակական լավ կարգավիճակ:

Բնապահպանական նպատակները պետք է սահմանվեն մակերևութային և ստորերկրյա ջրերի լավ կարգավիճակը ապահովելու, ջրավազանի ազգային ջրային պաշարները պահպանելու և ջրային մարմինների կարգավիճակի վատթարացումը կանխարգելելու նպատակով: ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ հանրային լուսմներն իրականացնել են Լոռու, Տավուշի մարզերում և Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում: Փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Լոռու, Տավուշի



մարզպետարաններում և Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզպետարաններից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել ՌԷԳ-ի փորձաքննության ընթացքում: Հիմնադրույթային փաստաթղթի գործողության ընթացքում էկոլոգիական իրավիճակի մոնիթորինգի միջոցով կբացահայտվեն և կգնահատվեն Հյուսիսային ԶԿՏ-ի ֆիզիկական, քիմիական, կենսաբանական և այլ փոփոխությունները, իսկ արդյունքները հիմք կհանդիսանան կանխարգելիչ գործողությունների կիրառման համար:

Փորձաքննական պահանջներ

Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵՐՈՒՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ի ՍԻ Ի Քաուքազու» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Հյուսիսային ջրավազանային կառավարման պլան» հիմնադրույթային փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝




Խաչիկ Մարտիրոսյան

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Հովակիմ Ֆրունզիկյան